ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 11-12-Ը ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Սուրեն Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Վրաստան (Թբիլիսի), 2020թ. փետրվարի 11-12-ը

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   «Հյուսիս-հարավ» գազատարի հետ կապված և ենթակառուցվածքների ոլորտում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր քննարկելու նպատակով աշխատանքային այց

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկված հիմնական թեմաներն են՝ տարածքային կառավարման ոլորտում փորձի փոխանակումը, համայնքների խոշորացումը, Սադախլո-Բագրատաշեն անցակետում նոր կամրջի կառուցումը, աղբահանությունը, աղբավայրերը, Հայաստան-Վրաստան բարձրավոլտ գծի կառուցումը, Վրաստանի տարածքով անցնող հայկական խողովակաշարի վերանորոգումը, Վրաստանից Հայաստան ներկրվող նավթամթերքի սակագների տատանումը, Սև ծովում լաստանավերի ձեռք բերումը:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Այցի ընթացքում ՏԿԵ նախարարը հանդիպում ունեցավ Վրաստանի փոխվարչապետ, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Մայա Ցքիթիշվիլիի հետ, որի ընթացքում քննարկվել են երկու կողմերի փորձի փոխանակումը տարածքային կառավարման և համայնքների

միավորման հարցերում, ինչպես նաև աղբահանություն և նոր չափորոշիչներով աղբավայրերի կառուցելու տարբերակներ:

Շեշտադրվել է նաև Սադախլո-Բագրատաշեն անցակետում՝ Դեբետ գետի վրա բարեկամական կամուրջի կառուցման հարցը:

Այցի շրջանակներում ՏԿԵ նախարարը հանդիպել է նաև Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Նատելա Տուրնավայի հետ, որի ընթացում հիմնականում քննարկվել է Վրաստանի տարածքով Հայաստան մատակարարվող գազատարի վրացական կողմում գտնվող հատվածի վերանորոգման աշխատանքները, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի կառուցման նախագիծը: Քննարկվել է նաև նավթամթերքի սակագների տատանման հարցը, երկաթուղային փոխադրումների ծավալի աճի ապահովումը:

Այցի ընթացքում ՏԿԵ նախարարը ելույթ ունեցավ Վրաստանում ՀՀ դեսպանության կողմից կազմակերպված ՀՀ Զինված ուժերի կազմավորման 28-ամյակին նվիրված ընդունելության ընթացքում:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների ընթացում հիմնական համաձայնությունը ստանձնած պարտավորությունների կատարումն է:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստանձնած պարտավորությունների պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է սերտ միջգերատեսչական համագործակցություն, ուստի առաջարկում եմ նշված ոլորտներում ընդլայնել միջգերատեսչական համագործակցությունը:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ